Bundesamt
für Migration
und Flüchtlinge

Պայմանագիր լեզվի կենտրոնի և կուրսի մասնակցի միջև Գերմաներեն լեզվի ուսուցմանն աջակցելու կանոնակարգի 8-րդ հոդվածի 4-րդ պարբերություն (DeuFöV)

Այսուհետ լեզվական պարզեցման պատճառով կօգտագործվի միայն արական ձևը: Սակայն խոսքը միշտ վերաբերում է և՛ արական և՛ իգական սեռին:

Սույն պայմանագիրը կնքվում է

Կուրսի մասնակցի ազգանուն, անուն և ծննդյան ամիս ամսաթիվ

և

Լեզվի կենտրոնի անվանումն ու հասցեն

միջև

1. Ուսման վճարը

Մասնագիտական լեզվի կուրսին մասնակցությունը սկզբունքորեն անվճար է:

Բացառություն են կազմում միայն այն աշխատող անձինք, որոնք չեն ստանում նպաստներ՝ համաձայն Սոցիալական II օրենսգրքի (SGB II), Սոցիալական XII օրենսգրքի (SGB XII), Ապաստան հայցողների նպաստի մասին օրենսգրքի (AsylbLG) կամ գործազրկության նպաստ I ստանալու իրավունք չունեն, չեն գտնվում մասնագիտության վերսկսման որակավորման կամ մասնագիտական կրթության գործընթացի մեջ՝ համաձայն Սոցիալական III օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին պարբերության և որոնց հարկման ենթակա եկամուտը չի գերազանցում անհատական հարկման դեպքում 20.000€ կամ համատեղ հարկման դեպքում 40.000€: Այս անձինք պարտավոր են վճարել ուսման վարձ: Լեզվի կենտրոնը պարտավոր է մասնակիցներին տեղեկացնել ուսման վարձի կանոնների մասին: Ուսման վարձը ամբողջ կուրսի համար պետք է վճարվի լեզվի կուրսի սկզբին լեզվի կենտրոնին:

Այն աշխատող անձինք, որոնք ազատվել են մասնագիտական լեզվի կուրսի վճարից, քանի որ նրանց տարեկան եկամուտը չի գերազանցում վերոհիշյալ սահմանը, պարտավոր են վճարել ուսման վարձը, եթե ոչ հարգելի պատճառներով կիսատ եք թողնում լեզվի կուրսը: Կուրսի աշխատող մասնակիցները հարգելի պատճառներով կուրսը դադարեցնելու պարագայում Դաշնային վարչությանը պարտավոր են ներկայացնել համոզիչ ապացույցներ:

Դասագրքերը մասնակիցներին անվճար տրամադրում է լեզվի կենտրոնը:

2. Ճանապարհածախսը

Այն մասնակիցները, որոնք ստանում են

- Գործազրկության նպաստ I (SGB III-Սոցիալական III օրենսգիրք)
- Գործազրկության նպաստ II (SGB II-Սոցիալական II օրենսգիրք)
- Սոցիալական նպաստ (SGB XII- Սոցիալական XII օրենսգիրք)
- Դեռահասների նպաստ (SGB VIII- Սոցիալական VIII օրենսգիրք Ապաստան հայցողների նպաստի մասին օրենսգրքով նախատեսված նպաստի փոխարեն)
- Նպաստ ըստ Ապաստան հայցողների նպաստի մասին օրենսգրքի (AsylbLG) կամ
- Մասնագիտական կրթության աջակցություն ըստ Սոցիալական III օրենսգրքի 56-րդ հոդվածի (SGB III)

Կարող են ստանալ անհրաժեշտ ճանապարհածախսի նպաստ: Եթե կուրսի մասնակցության ընթացքում կուրսի մասնակիցը դադարում ստանալ նպաստներ, ապա նա պարտավոր է այդ մասին անհապաղ հայտնել լեզվի կենտրոնին և Դաշնային վարչությանը:

Ընդհանուր ճանապարհածախսի նպատս վճարվում է այն դեպքում, եթե ոտքով ամենկարճ ճանապարհը Ձեր բնակարանից մինչև դասընթացների վայրը կամ քննությունը հանձնելու վայրը կազմում է նվազագույնը 3 կմ: Ճանապարհածախսի նպաստի դիմումը պետք է ներկայացվի լեզվի կենտրոնի միջոցով: Դիմումի մերժման դեմ կուրսի մասնակիցն իրավունք ունի բողոքարկելու կամ լեզվի կենտրոնին լիազորագիր տալու, որ նա որպես մասնակցի ներկայացուցիչ ներկայացնի բողոքը:

Եթե ճանապարհածախսի նպատսը Դաշնային վարչության կողմից տրամադրվում է, ապա այն տրվում է կուրսի մասնակցության ողջ ընթացքի համար: Նպաստի տրամադրման որոշումը չի փոխվում ճանապարհավճարի գների փոփոխության դեպքում: Բնակավայրի կամ դասընթացների վայրի փոփոխության դեպքում նպաստի տրամադրման որոշումն անվավեր է դառնում: Անհրաժեշտության դեպքում պետք է նոր դիմում ներկայացնել:

3. Երեխաների խնամքը

Լեզվի կենտրոնը աջակցում է մասնակիցներին երեխաների համար խնամող գտնելու հարցում:

4. Կուրսի սկիզբը

Գրանցվելուց հետո չորս շաբաթվա ընթացքում մասնակիցը պետք է հաճախի մասնագիտական լեզվի կուրսին: Եթե այդ ընթացքում կուրսը տեղ չի ունենում, ապա լեզվի կենտրոնը մասնակցին պետք է ուղարկի մեկ այլ լեզվի կենտրոն, որը համապատասխան կուրս է առաջարկում: Լեզվի կենտրոնը մասնակցության թույլտվություն ունեցողին վերադարձնում է մասնակցության թույլտվության բնօրինակը և տեղեկացնում Դաշնային վարչությանը մասնակցին այլ լեզվի կենտորն ուղարկելու մասին:

Մասնակիցը պարտավոր է իր հասցեի փոփոխության դեպքում անմիջապես տեղեկացնել կուրսը վարողին: Կուրսը հնարավոր է փոխել միայն խիստ ծանր դեպքերում: Խիստ ծանր դեպք է համարվում, եթե օրինակ՝ տեղափոխվելուց հետո նոր ուսումնական վայր հասնելը 90 րոպեից երկար է տևում: Կուրսը փոխելու համար մասնակիցը պետք է դիմում ներկայացնի իր համար պատասխանատու Դաշնային վարչության գլխավոր գրասենյակին:

Եթե լեզվի կենտրոնը ամբողջ կուրսը ստիպված է չեղարկել, ապա նա պարտավոր է մասնակցին տեղավորել մեկ այլ համապատասխան կուրսում:

5. Վարքը դասերի ժամանակ

Դասերին պետք է մասնակցել կանոնավոր և ճշտապահ ձևով: Մասնակիցը պատրաստակամություն է հայտնում՝ ակտիվ մասնակցել դասերի կազմակերպման գործընթացին:

Պետք է պահպանել լեզվի կուրսերի աշխատանքային կանոնները: Կանոնները խախտելու դեպքում,մասնակցին կարող են հեռացնել կուրսից:

6. Բացակայության ժամերը

Դասերի ժամանակ հնարավոր չէ անձնական արձակուրդ վերցնել:

Մասնակցի կողմից լեզվի կուրսի դադարեցման մասին լեզվի կենտրոնը անմիջապես տեղեկացնում է Դաշնային վարչությանն ու մասնակցության թույլտվությունը տրամադրող հաստատությանը: Բացի դրանից՝ այն մասնակիցների դեպքում, որոնց Զբաղվածության կենտրոնը պարտավորեցրել է մասնակցել կուրսին, լեզվի կենտրոնը անմիջապես տեղեկացնում է Զբաղվածության կենտրոնին, եթե դասերին ոչ կանոնավոր հաճախելու պատճառով կուրսը բարեհաջող ավատրելու հավանականությունը վտանգված է (Գերմաներեն լեզվի ուսուցմանն աջակցելու կանոնակարգի 9-րդ հոդվածի 5-րդ պարբերության 2-րդ նախ.(DeuFöV):

Լեզվի կենտրոնը պարտավոր է տեղեկացնել հատկապես, երբ մասնակիցը բացակայում է՝

- կուրսի առաջին օրը անհարգելի պատճառով
- նվազագույնը երեք օր իրար հետևից հարգելի կամ անհարգելի պատճառով
- դասաժամերի 20 %-ից ավելին:

Եթե մասնակիցը բացակայել է մասնագիտական լեզվի կուրսերի դասաժամերի 30%-ից ավելին, ապա այլևս չի կարելի սպասել, որ նա բարեհաջող կավարտի կուրսը: Նման դեպքում լեզվի կենտրոնը պարտավոր է տեղեկացնել Աշխատանքի գործակալությանը կամ Զբաղվածության կենտրոնին և Դաշնային վարչությանը մասնակցի կուրսը դադարեցնելու մասին:

Եթե մասնակիցը բացակայում է դասից, ապա որպես ապացույց միշտ պետք է ներկայացնի բացատրագիր: Ապացույց հանդիսացող փաստաթղթերը, օրինակ՝ բժշկի տեղեկանքը, պետք է անհապաղ տալ լեզվի կենտրոնին: Մասնակիցը կուրսից իրավունք ունի բացակայելու հետևյալ պատճառներով՝

Հիվանդություն	**Մինչև մեկ օր,** եթե մասնակիցները լեզվի կենտրոնին հեռակապով/ բանավոր կամ գրավոր տեղեկացնում են հիվանդության մասին (լեզվի կենտրոնը այդ մասին գրավոր գրանցում է կատարում) **Երկրորդ օրվանից սկսած** պետք է ներկայացնել տեղեկանք
Մինչև 12 տարեկան հիվանդ երեխայի խնամքի դեպքում, եթե այլ խնամող չկա:	Եթե ներկայացվում է երեխային խնամելու անհրաժեշտության մասին բժշկական տեղեկանք՝ վավերական կուրսի առաջին օրվանից

Մինչև 8 տարեկան երեխային խնամողի անկանխատեսելի բացակայության դեպքում (օրինակ՝ եթե երեխային խնամողը հիվանդացել է)	Եթե առկա է խնամքն իրականացնող պատասխանատու հաստատության գրությունը
Երեխայի խնամողի բացակայության կամ դպրոցը կամ մանկապարտեզը փակվելու դեպքում, եթե դպրոցի կամ մանկապարտեզի փակելը կարգադրվել է երկրամասային կառավարության կողմից և երեխան չի բոլորել իր 12 ամյակը:	Եթե ներկայացվում է դպրոցը փակվելու մասին ապացույց (ողջ երկրում, երկրամասում կամ շրջանում դպրոցը փակվելու դեպքում պարտադիր չէ)
Բարեկամներից կամ ընտանիքի անդամներից մեկին խնամելու դեպքում, եթե նա ապրում է մասնակցի հետ նույն տանը	Եթե ներկայացվում է տեղեկանք բարեկամի խնամքի անհրաժեշտության մասին
Մասնակցի ամուսնության դեպքում	**Երկու կուրսային օր**, եթե ներկայացվում է համապատասխան փաստաթուղթ (ամուսնության վկայական)
Ֆիզարձակուրդ	Եթե ներկայացվում է ամապատասխան փաստաթուղթ (օր.՝ բժշկական տեղեկանք)
Մասնակցի կնոջ ծննդաբերության դեպքում	**Երկու կուրսային օր**, եթե ներկայացվում է համապատասխան փաստաթուղթ (օր.՝ բժշկական տեղեկանք, ծննդյան վկայական)
Ամուսնու, կնոջ, զուգընկերոջ, երեխայի կամ ծնողներից մեկի մահվան դեպքում	**Մինչև երկու կուրսային օր**, եթե ներկայացվում է հաստատող փաստաթուղթ **Մինչև հինգ կուրսային օր**, եթե բարեկամի թաղումը տեղի է ունենում արտասահմանում
Եթե որևէ պետական հաստատություն ներկայանալու կանչ/հրավերք կա (Օր.՝ Արտասահմանցիների հարցերով գերատեսչություն/ դատարան)	Եթե ներկայացվում է համապատասխան փաստաթուղթ
Կուրսին մասնակցելու թույլտվություն տված հաստատության կողմից թույլատրված բացակայության դեպքում	Եթե ներկայացվում է համապատասխան փաստաթուղթ
Աշխատողների և մասնագիտական կրթություն ստացողների համար գործատուի կողմից թույլատրված արձակուրդի դիմումի դեպքում	Եթե ներկայացվում է թույլատրված արձակուրդի դիմումի պատճենը
Տեղային կառավարման մարմինների կողմից տնային կարանտին նշանակելու դեպքում	Համապատասխան փաստաթուղթ ներկայացնելու դեպքում (պարտադիր չէ, եթե կարանտինը նշանակված է բնակության հասցեի ողջ տարածքի համար)
Կովիդ-19 հիվանդության ստուգման համար թեստավորման մասնակցելու դեպքում	թեստավորման օրը և այն օրերը, երբ սպասում եք թեստի պատասխանին, համապատասխան ապացույց ներկայացնելու դեպքում:
Ռիսկային խմբին պատկանելու դեպքում, որոնց դեպքում բժշկական տեսանկյունից Կովիդ-19 հիվանդության դեպքում ծանր ընթացք է սպասվում, եթե վիրտուալ դասին մասնակցելու առաջարկ դեռ չկա:	Ռիսկային խմբին պատկանելու մասին բժշկական տեղեկանք ներկայացնելու դեպքում Ցուցում՝ նույնիսկ ռիսկային խմբին պատկանելու դեպքում, հնարավոր է կամավոր հիմունքներով

	ֆիզիկապես ներկա գտնվելով մասնակցել կուրսին:

Լեզվի կենտրոնը պահպանում է ներկայացված բժշկական տեղեկանքները կամ բացակայության հիմնավորումներն ու փաստաթղթերը:

7. Վկայականի քննությունը

Լեզվի կենտրոնը մասնագիտական լեզվի կուրսի յուրաքանչյուր մասնակցին առաջարկում է վկայականի քննություն: Հատուկ մասնագիտացված լեզվի կուրսերին, օրինակ՝ առևտուր կամ կոմերցիալ գործունեություն/տեխնիկա վկայականի փոխարեն տրվում է մասնակցության մասին տեղեկանք, որտեղ նշված է՝ ինչ ուսումնական առաջընթաց է գրանցվել: Վկայականի քննությունը հնարավոր է մեկ անգամ կրկնել՝ չստանալու դեպքում:

Եթե մասնակիցը չի ստացել քննությունը, ապա կարող է լեզվի կուրսը կրկնելու համար դիմում ներկայացնել Զբաղվածության կենտրոնին կամ Աշխատանքի գործակալությանը:

Վկայականի քննությանը մասնակցելը, ինչպես նաև այն մեկ անգամ կրկնելը մասնակցի համար անվճար է:

Եթե մասնակիցը քննությունը կրկնելուց հետո նույնպես չի ստանում այն, ապա լեզվի կենտրոնի կողմից ստանում է կուրսի մասնակցության մասին տեղեկանք, որտեղ նշված է ինչ ուսումնական առաջընթաց է գրանցվել: Մասնակցության տեղեկանքի պատճենը լեզվի կենտրոնը պարտավոր է ուղարկել ինչպես Դաշնային վարչությանը, այնպես էլ Աշխատանքի գործակալությանը կամ Զբաղվածության կենտրոնին: Նույնը վերաբերում է նաև վկայականի քննության արդյունքներին:

8. Տվյալների հավաքագրումը

Մասնակցիներին վերաբերող տվյալները իրավունք ունեն միայն համապատասխան (նաև տվյալների հավաքագրման օրենքին համապատասխան) կանոնները պահպանելով՝ բացառապես լեզվի կուրսերը անցկացնելու և հաշվապահությունն իրականացնելու նպատակով օգտագործվել և փոխանցվել իրավասու մարմիններին (օրինակ՝ Դաշնային վարչությանը, Աշխատանքի գործակալությանը, կյանքի հիմնական ապահովման նպաստի պատասխանատուին): Այս տվյալներն իրավունք չունեն օգտագործվելու կամ մեկ ուրիշին փոխանցվելու այլ՝ հատկապես կոմերցիալ նպատակով:

Լեզվի կենտրոնը պարտավոր է մասնակցի տվյալները ամենաուշը հինգ տարի անց ջնջել:

Մասնակիցն իրավունք ունի իր անձին վերաբերող փաստաթղթերը տեսնելու:

Վայր, ամսաթիվ)

_____	_____
Մասնակցի ստորագրությունը (Խնդրում ենք ուշադրություն դարձնել՝ առանց ստորագրության կուրսի մասնակիցը իրավունք չունի մասնակցելու կուրսերին: 18 տարեկանից ցածր մասնակիցների դեպքում՝ ծնողների կամ օրինական ներկայացուցչի ստորագրությունը)	Լեզվի կենտրոնի ստորագրությունը